

**ԱՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՆՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

ՍՈՆԱ ՄԱՆՈՒՄՅԱՆ

Ժամանակակից հասարակություններում, որոնք հաճախ անվանվում են *տեղեկատվական*, կիրառական գիտելիքի և հասարակական գործընթացների կապն ավելի ակնհայտ է դարձել¹: Իհարկե, գիտելիք և տեղեկատվություն հասկացությունները չեն նույնացվում, և այս առումով կարելի է վիճարկել այն կարծիքը, որ գիտելիքի ինտենսիվ արտադրությունը հենց տեղեկատվական հասարակության մենաշնորհն է: Կարելի է հնարավոր համարել, որ որակապես նորի ստեղծման առումով մեծ տարբերություններ չկան ժամանակաշրջանների միջև, և ավելացել է ոչ թե գիտելիքը, այլ դրա մասին տեղեկատվության սփռումը: Հնարավոր է նաև, որ նոր ժամանակաշրջանի յուրահատկությունը ոչ թե գիտելիքի աննախադեպ կարևորումն է, այլ այդ գիտելիքի ստացման, կազմակերպման, տարածման ձևերի և սուբյեկտների փոփոխությունը: Ի վերջո, գիտելիքը հիմնարար արժեք է բոլոր ժամանակներում և բոլոր մշակույթների համար: Անկախ նշվածից՝ ակնհայտ է, որ նորարարության ու առաջընթացի հարցերը նախկինում երբեք այսքան ինտենսիվորեն չեն քննարկվել: Ճապոնական «Նոնուրա» հետազոտական ինստիտուտը, հետևելով քաղաքակրթական զարգացման ժամանակաշրջանների վերաբերյալ արդի մոտեցումներին (Ռիսմեն, Յաչիդա, Թոֆլերներ և այլք), իր հայեցակարգում առանձնացնում է հասարակական-տնտեսական զարգացման չորս դարաշրջան՝ գյուղատնտեսական, արդյունաբերական, տեղեկատվական և վերջինը (դեպի որն այժմ սահուն անցում ենք կատարում)՝ հենց *կրեատիվ*, այն է՝ մշտական ինովացիաներ: Զարգացնելով այս գաղափարը՝ Դ. Փինքը² վերջին փուլն անվանում է *կոնցեպտուալ*՝ դրա կրողներ համարելով ստեղծարարներին և «էմպատայզերներին»³:

Այսպիսով, դասական, «պահպանողական» գիտելիքը՝ ծրագրային կրթությամբ յուրացվող և փոխանցվող, զարգացման հավակնություններ ունեցող ցանկացած համակարգի համար՝ լինի կազմակերպություն, թե պետություն, արդեն բավարար չէ. դրան զուգահեռ ու գուցե դրանից ավելի կարևորվում և ողջունվում են այլընտրանքային, ոչ հաստատ, բայց պոտենցիալ արդյունավետ նոր մոտեցումները: Այս պարագայում ինտելեկտուալ ներուժը ուղղված է ոչ այնքան գիտելիքի յուրացմանն ու վերար-

¹ Տե՛ս **Գ. Գրիգորյանց**, Գիտելիքն ու իշխանությունը տեղեկատվական հասարակության մեջ, մաս 1, Եր., 2006:

² Տե՛ս **Pink, D. H.** A Whole New Mind: Moving from the information age into the conceptual age. NSW: Allen&Unwin, 2005:

³ empathizers - իրերը ներսից հասկացողներ, հնարամիտներ՝ ինտուիտիվ և տրամաբանական բարձր ունակությունների համադրմամբ:

տադրությանը, որքան արտադրությանը և փորձարկմանը: Այս միտումին նպաստում է այն, որ նոր ժամանակները բնութագրվում են սոցիալական և ֆիզիկական միջավայրի փոփոխականության ու կյանքի անորոշության բարձր աստիճանով, որի դեպքում պահանջվում է ընկալման և գործողությունների ճկունություն, այլընտրանքային, մեկից ավելի հնարավոր սահմանումների, մեկնաբանումների ու լուծումների նկատմամբ հանդուրժողականություն:

Ամենևին ոչ պատահաբար *նորարարություն* հասկացությունը տեխնիկական գիտություններից փոխանցվել է նաև սոցիալական ու հոգեբանական գիտությունների ոլորտ և անբաժան բաղադրիչ է «սոցիալական ինժեներիայի»՝ սոցիալական կառույցների ու գործընթացների բարելավմանն ուղղված արևմտյան նախագծերում: Ընդ որում՝ նորարարությունն ավելի լայն հասկացություն է, քան պարզապես մեխանիկական գյուտը կամ գիտական հայտնագործությունը: Այն շարունակական գործընթաց է՝ բազում միջանկյալ և վերջնական արդյունքներով, և ունի ներդրման լայն դաշտ՝ գյուղատնտեսական միջոցների արդիականացումից մինչև հանրային կառավարում: Նորարարության «տեխնոլոգներ» կան ինչպես գիտության, կրթության, այնպես էլ կառավարման ոլորտներում: Գիտության հստակ մշակված քաղաքականություն իրականացնող զարգացած պետություններում նորարարությունը, որպես կարևոր գիծ, հատուկ նշվում է ինչպես պետության գերակայությունների, այնպես էլ գիտակրթական հաստատությունների նպատակների շարադրման մեջ: Այն շատ բուհերում որպես առանձին դասընթաց ներառված է սոցիալական գիտությունների առարկայական ծրագրերում⁴:

Նորարարության հետ սերտորեն փոխկապակցված հասկացություն է, բնականաբար, *կրեատիվությունը*: Այն ևս Արևմուտքի շատ առաջատար համալսարաններում ոչ միայն հետազոտական թեմա է, այլև՝ դասավանդվող առարկա: Ընդ որում՝ կրեատիվության դասընթացները հիմնականում մասնագիտացման երեք ոլորտներում են՝ 1. հոգեբանություն և մանկավարժություն, 2. բիզնես և 3. ինժեներիա ու տեխնոլոգիաներ: Առարկան հատկապես բարձր վարկանիշ ունեցող համալսարանների կրթական ծրագրերի պարտադիր մաս է. Յեյլի, Հարվարդի, Ստենֆորդի և մի շարք այլ համալսարաններում կրեատիվության ծրագրերի ղեկավարները կրեատիվության տեսության, կիրառական հետազոտությունների և մշակումների ոլորտներում միջազգային ճանաչմամբ առաջատար մասնագետներ են⁵:

Այս ընդհանուր համատեքստում առաջավոր հոգեբանության հիմնական ոլորտներից մեկն այսօր անհատական և խմբային մակարդակում ստեղծարարության զարգացմանն ուղղված գործնական մշակումներն են՝ համապատասխան հետազոտական հենքի վրա: Վերջիններս հիմնականում ուղղված են նորարարական կամ էվրիստիկ ակտիվության ներքին հոգեբանական (կոգնիտիվ, հուզական) մեխանիզմների բացահայտմանը: Ինչպես վերը նշեցինք, սոցիալական արագընթաց փոփոխությունների և

⁴ <http://sirkenrobinson.com/skr/pdf/allourfutures.pdf>

⁵ <http://www.cct.umb.edu/fangqi.pdf>

ինֆորմացիայի բազմազանեցման համապատկերում կրեատիվությունը դառնում է ավելի կարևոր մարդկային կարողություն: Ուստի դիտարկելով տվյալ հանրության մեջ կրեատիվությանը տրվող դերը՝ կարող ենք որոշակի պատկերացում կազմել հասարակական զարգացման վիճակի մասին:

Կրեատիվության հոգեբանական և հասարակական ըմբռնումները

Կրեատիվությունը կարելի է սահմանել որպես մտավոր գործընթաց՝ ուղղված նոր գաղափարների և հասկացությունների գեներացմանը կամ գոյություն ունեցող գաղափարների և հասկացությունների միջև նոր տիպի կապերի հաստատմանը: Կրեատիվությունը սերտորեն կապված է երևակայության (ավելի, քան մտածողության) գործընթացի հետ և առնչվում է մարդու՝ նորի բացահայտման, ինչպես նաև ինքնաարտահայտման պահանջներին:

Դեռևս XX դ. 60-ականներին հոգեբանության մեջ կրեատիվության հոգեչափողական հետազոտությունների հիմնադիր Ջ. Գիլֆորդի, իսկ հետագայում՝ Ի. Տորենսի վիճակագրական վերլուծությունների արդյունքում կրեատիվությունն առանձնացվեց որպես մարդկային մտավոր ակտիվության առանձին ասպեկտ՝ տարանջատվելով ինտելեկտի գործակցից⁶: Մ. Մամֆորդը, ընդհանրացնելով կրեատիվության գիտական ըմբռնումները, կրեատիվ գործընթացի հիմնական բնութագիր է դիտում նորարար, օգտակար արդյունքների արտադրությունը⁷: Այդ արտադրանքը կարող է լինել գործիք, արվեստի գործ, բայց նաև՝ սոցիալական խնդրի լուծման ծրագիր և այլն: Լ. Նեյմանը կրեատիվությունը բնորոշում է որպես նորարարական և երևակայությամբ հագեցած գաղափարներն իրականության վերածելու ակտ՝ գտնելով, որ ինչ-որ բան կրեատիվ համարելու համար անհրաժեշտ է երկու բաղադրիչ՝ նորի մտահղացում և դրա իրականացում⁸: Դրանով կրեատիվությունը տարբերվում է պարզապես երևակայությունից: Այսպիսով, թեև առօրյա ըմբռնմամբ ցանկացած նոր մոտեցում կարելի է դիտարկել որպես անձի կրեատիվություն, սակայն գիտական, ինչպես նաև հանրային նշանակության տեսակետից կրեատիվ մտքի արտադրանքը ինքնատիպ լինելու կողքին պետք է բնութագրվի նաև նպատակահարմարությամբ, արդյունքով: Ըստ էության, կրեատիվության և մարդկային կենսագործունեության նպատակահարմարության միջև առկա կապը միանգամայն հասկանալի է: Այն, ըստ կրեատիվության ուսումնասիրության ակունքներում կանգնած Գ. Վալասի, էվոլյուցիոն գործընթացից ժառանգված հատկանիշ է, որը մարդկանց արագ փոխվող միջավայրերին հարմարվելու հնարավորություն է տալիս⁹: Այսպիսով, կրեատիվ արտադրանքը ոչ թե պարզապես նոր է, այլև կիրառելի: Ըստ որում՝ նորարարական

⁶ Տե՛ս **Mark, A.** Runco and Steven R. Pritzer. Encyclopedia of Creativity, Vol. 1. Academic Press, 1999:

⁷ Տե՛ս **Mumford, M. D.** Where have we been, where are we going? Taking stock in creativity research. // Creativity Research Journal, 2003, №15, էջ 107–120:

⁸ Տե՛ս **Naiman, L.** What is creativity. <http://www.scribd.com/doc/45086576/What-is-Creativity>

⁹ Տե՛ս **Simonton, D. K.** Origins of genius: Darwinian perspectives on creativity, Oxford University Press, 1999:

գաղափարի արժեքն ու նշանակալիությունը հասարակական գնահատման արդյունք են՝ կախված տվյալ ժամանակաշրջանի և սոցիոմի գերակայություններից: «Յենց այնպես» կրեատիվության և կիրառական, հասարակական ազդեցություն ունեցող կրեատիվության միջև տարբերակում կատարելու համար տեսաբաններն առանձնացնում են պատմական նշանակության կրեատիվություն (h-creativity) և անձնային մակարդակի կրեատիվության (p-creativity)¹⁰ կամ մեկ այլ տերմինով՝ մեծ Կ (Big-C) և փոքր Կ (Little-C):

Թեև կրեատիվության և հասարակական առաջընթացի կապի մասին խոսելիս նկատի ունենք առավելապես այդ մեծ, հանրային նշանակության «Կ»-գործոնի խթանումը, իրականում այս երկու մակարդակները փոխհյուսված են. «հանրագումարային» կրեատիվությունը ձեռք է բերվում հենց այդ հանրությունը կազմող անհատների կրեատիվ մտածողության ձևերը անհատապես զարգացնելու միջոցով: Այսպիսի հստակ գիծ ունի բարձրագույն կրթության կազմակերպումը ԱՄՆ-ում: Նշենք նաև, որ թեպետ կրեատիվության հանրօգուտ լինելն արդեն լայնորեն ընդունված տեսակետ է, սակայն մինչ այժմ էլ թեմայի հանդեպ հասարակական վերաբերմունքը ոչ միանշանակ է, և որոշակի քննադատություն կա կրեատիվությանը տրվող կարևորության աստիճանի շուրջ: Կրեատիվության ջատագովները ավանդական, կոնվենցիոնալ դպրոցը դիտում են որպես երևակայությունը «խլացնող», ազատ մտածողությունը ճնշող միջավայր¹¹, բայց տեսակետներ կան և հակառակ բևեռում: Շատ հասարակություններում կրեատիվությունը չեն ողջունում, քանի որ կապ ունի ինքնուրույնության, սոցիալական սահմանափակումներից վերազանցվելու, այլընտրանքային մտածողության հետ՝ մակերեսային մոտեցման դեպքում այն կոհիտվի որպես սպառնալիք հասարակության կայունությանը և կառավարելիությանը:

Այսպիսով, արդեն ուրվագծվում է, որ տարբեր հանրություններում տարբեր է նորարարությանն ու ստեղծարարությանը տրվող դերը, ինչը բխում է ինչպես տնտեսական-քաղաքական, այնպես էլ մշակութային-հոգեբանական առանձնահատկություններից:

Կրեատիվության հանրային նշանակությունը տարբեր մշակույթներում

Կրեատիվության մշակութային առանձնահատկությունների մասին խոսելիս նկատի ունենք ոչ թե դրա՝ որպես ընդունակության մակարդակի միջմշակութային տարբերությունները, այլ բովանդակային տարբերությունները՝ կրեատիվության արժևորման առումով: Վերջիններս բխում են գերիշխող մշակութային արժեքների տարբերությունից և այն նպատակից, որին տվյալ հանրության մեջ ծառայում է գիտելիքի ձեռքբերումը: Տարբեր հանրություններ համեմատելով գիտելիքի արտադրության նպատակների

¹⁰ Տե՛ս **Boden, M. A.** *The Creative Mind: Myths and Mechanisms*. London: Routledge, 2004, էջ 1-10:

¹¹ Տե՛ս **Amabile, T. M.** "How to kill creativity". Harvard Business Review, 1998:

ու ձևերի տեսակետից՝ կնկատենք որոշ առանձնահատկություններ: ԱՄՆ-ում, օրինակ, դրանք շատ ավելի ուղղակիորեն են կապվում պրագմատիկ *արդյունքի*, առաջընթացի, ազդեցության և ուժի գաղափարախոսության հետ: Կրեատիվության ամերիկյան կոնցեպտը հիմնված է խիստ պրագմատիզմի վրա և հետևողականորեն խթանվում է տեխնիկական և հասարակական առաջընթացի համատեքստում: Պարզ ասած՝ կրեատիվությունը լավ է ոչ թե պարզապես այն պատճառով, որ գեղեցիկ է, այլ որովհետև օգտակար է, իսկ օգտակար է, որովհետև հանգեցնում է արդյունքի՝ ինովացիաների, որոնց շնորհիվ մնում են աշխարհի տիրապետող: Սա գոնե առաջին հայացքից պարադոքս է. այնպիսի ինքնաբուխ երևույթ, ինչպիսին ստեղծարար ակտիվությունն է, կազմակերպվում և ուղղորդվում է բոլորովին ոչ ինքնաբուխ ջանքերով: Կրեատիվությունն այնքան է կարևորվում պաշտոնական, գիտական և առօրեական դիսկուրսներում, որ արդյունքում, օրինակ, ամերիկացի տիպական ուսանողի (ամենևին ոչ պարտադիր իսկապես կրեատիվ անհատի) մոտ դարձել է կայուն ինքնաբնութագիր, ինքնաընկալման մաս: Այսպես, հունամիտար բնագավառում մասնագիտացող, նույնիսկ ինքնատիպ մտածողությամբ աչքի չընկնող ուսանողը հակված է իր կրթական գործընթացը նկարագրելիս շեշտադրել կրեատիվությունը, որի շնորհիվ իրենք համատեղ կամ անհատապես կարևոր արդյունքների են հասնում: Համարվում է, որ եվրոպական ավանդույթում ճանաչողության գործընթացը գերծ է այս ուղղակի պրագմատիզմից, և նպատակ կարող է լինել ինքնին գիտելիքի ստացումը, ինքնագարգացումը: Այս շրջանակներում կրեատիվությունը ևս «հենց այնպես է»՝ *ոչ ինստրումենտալ*, պահպանում է ինքնաբուխ տարրը: Արևելյան համակարգերում ստեղծարարության հասկացությունը առավելապես կապված է ներդաշնակության, բնության մաս լինելու հետ, և կրեատիվությունն ըմբռնվում է ավելի շատ որպես կյանքի հոլիստիկ գործընթացի մաս, մարդու՝ որպես միկրոկոսմոսի բնույթ, քան առանձին գործունեության ոլորտ, որ պետք է կազմակերպել¹²: Արևմուտք-արևելք նման տիպաբանական խիստ տարբերակումը կարելի է, իհարկե, վիճարկել հենց ճապոնական հզոր նորարարության օրինակով: Այն կարելի է դիտարկել որպես արևելյան ու արևմտյան մոդելների հաջողված համադրում և կամ ինքնուրույն տեսակ. բոլոր դեպքերում սա առանձին ուսումնասիրության խնդիր է:

Նկատելի է, որ կրեատիվության այս տարբեր ըմբռնումներն արտացոլում են նաև *արժեհամակարգային տարբերություններ*, որտեղ մի կողմում ունենք *առաջընթաց*, բնական և սոցիալական *միջավայրի փոփոխման և տիրապետման*, *անհատական ձեռքբերումների* արժևորում, մյուս կողմում՝ կոլեկտիվիստական կողմնորոշման հետ կապված՝ *ներդաշնակություն*, *հարմարում* և *անվերապահ ընդունում*՝ *փոփոխելու փոխարեն*:

Այսպիսով, թեև այսօր գիտելիքի տեղի ու դերի փոփոխությունները առավելապես քննարկվում են քաղաքակրթական դարաշրջանների շրջափոխմանն ուղեկցող համաշխարհային միտումների համատեքստում, այ-

¹² **Տե՛ս Niu, W.** The Philosophical Roots of Western and Eastern Conceptions of Creativity. // Journal of Theoretical and Philosophical Psy. Vol. 26, 2006, http://www.westga.edu/~stpp/JTPP_Articles/26-2/THE1210.pdf.

սինքն՝ *ժամանակային* առումով, վարիացիաներ ենք նկատում նաև մշակույթից մշակույթ, հասարակությունից հասարակություն, այսինքն՝ *տարածքային* առումով: Որքան էլ ունիվերսալ է նորի հանդեպ մարդկային պոզիտիվ հետաքրքրությունը, այնուամենայնիվ, ստեղծարարությունը՝ որպես առաջընթացի գործոն, բնորոշ է հատկապես արևմտյան հասարակություններին, կամ առնվազն մինչ այժմ նրանցում դրա կազմակերպումն ավելի լավ է ստացվել: Արևմտյան մոդելները այս փուլում առանձնակի ուշադրության են արժանի այն առումով, որ մեր տիպի հասարակությունների համար արագություն զարգացնելը դարձել է մի կողմից՝ ժամանակի հրամայական, իսկ մյուս կողմից՝ հնարավոր: Ինչպես իրավամբ նշում է Գ. Գրիգորյանը, ինֆորմացիոն հասարակության տարրերը թափանցում են բոլոր հանրություններ՝ անկախ այն բանից, թե վերջիններս արդիականացման ինչ փուլում են գտնվում¹³: Այս իրավիճակը որքան դուրս մղվելու ռիսկեր է պարունակում, գրեթե նույնքան էլ՝ ցատկերի և աշխարհին համահունչ ընթանալու հեռանկարներ՝ անկախ երկրի դիրքից և զարգացման «տեղական ժամանակից»: Նման նպատակներ իրագործելուց առաջ անհրաժեշտ է կոլեկտիվ ստեղծարարության տեսակետից սեփական յուրահատկությունների և ռեսուրսների իմացություն:

Հայաստանում կրեատիվության վերաբերյալ հետազոտություններ արված են, սակայն դրանք չունեն կոլեկտիվ կրեատիվության ուսումնասիրման ուղղվածություն: Իրականացված չեն սոցիալ-հոգեբանական հետազոտական ծրագրեր խմբային կրեատիվ գործընթացների և դրանց նպաստող ներքին ու իրադրական գործոնների, կրեատիվության վրա տարբեր մեզո- և մակրոգործոնների՝ մշակութային, հասարակական և քաղաքական համատեքստի ազդեցության և մի շարք այլ ասպեկտների վերաբերյալ:

Մեզանում նորարար գիտելիքի հասարակական արժևորումը հասկանալուն օգնում է *ինստրումենտալ և տերմինալ* արժեքների տարբերակումը Ռոկիչի¹⁴ և այլոց կողմից: Տերմինալ կամ *վերջնանպատակ-արժեքները* ավելի ունիվերսալ և կայուն են, դրանք կարելի է ձևակերպել որպես ցանկալի վերջնական վիճակներ, որոնք մարդը կարևորում և ձգտում է հասնել ողջ կյանքում՝ լինեն դրանք հոգևոր, թե նյութական: Ինստրումենտալ կամ այլ կերպ ասած՝ *միջոց-արժեքներն* արդեն իրենցից ներկայացնում են տերմինալ արժեքներին հասնելու նախընտրելի միջոցներ, վարքաձևեր: Գիտության հանդեպ վերաբերմունքների համակարգն, այս առումով, ունի տերմինալ-արժեքի և արժեք-միջոցի փոխկապակցված բաղադրիչները: Այսպես, գիտելիք ստանալը մի կողմից արժեք-նպատակ է՝ կապված ինքնազարգացման ձգտման հետ. միևնույն ժամանակ այն կարող է լինել ինստրումենտալ արժեք՝ ծառայելով այլ, ասենք՝ ինքնազարգացման, ինքնադիրքավորման, սոցիումի կամ ընտանիքի կողմից ընդունման և այլ նպատակների: Այս փուլում դժվար է միանգամից ասել, թե մեր հասարակության մեջ գիտելիքի հանդեպ դիրքորոշումները ո՞րն է ավելի բնորոշ, կարելի է նախնական դատողություններ անել՝ նկատելով, որ այն արժեք-

¹³ Տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ.:

¹⁴ Տե՛ս Rokeach, M. The Nature of Human Values. New York: Free Press, 1973:

նպատակից վերածվել է ինքնանպատակի, սակայն դեռ ձեռք չի բերել արժեք-միջոցի պրագմատիկ կարգավիճակ: Մյուս կողմից՝ վերջերս շատ կարճ ժամանակահատվածում իրար հաջորդելով տեղ են գտնում ստեղծարարությանն առնչվող նախաձեռնություններ, որոնց միջև կա որոշակի համաժամանակություն, ինչը միտում դառնալու և սիներգիկ արդյունքների հասնելու պոտենցիալ ունի: Հիմնվել ու գործարկվում են կրթական նոր հաստատություններ, որտեղ նորարարությունն ու կրեատիվությունը «կարված» են նրանց գործունեությանը և հայտարարվում են որպես կուլեկտիվ նպատակադրում, ներառյալ՝ ՋԼՄ-ներով (այդպիսի օրինակ է ԹՈՒՄՈ կենտրոնը): Սակայն, ինչպես հուշում է վերը շարադրվածը, կրեատիվությունը ոչ այնքան անհատական, որքան կուլեկտիվ գործողություն, համագործակցություն է: Ընդ որում՝ կուլեկտիվ կրեատիվ գործընթացի համար հատկապես կարևոր ասպեկտ է ներխմբային զանազանությունը (ներառյալ մոտեցումների), դրանց խրախուսումը և օպտիմալ փոխլրացման կազմակերպումը: Նշվածից հասկանալի է դառնում, որ նման նախաձեռնությունների կենսունակության և շարունակականության համար անհրաժեշտ է բարենպաստ սոցիալ-մշակութային, տնտեսական համատեքստ, ինչպես նաև՝ ինստիտուցիոնալ մակարդակում համապատասխան քաղաքականությունների առկայություն: Նպաստավորությունը տվյալ դեպքում տեսակետների զանազանության հանդեպ բարձր հանդուրժողության և քննարկումների խթանման մշակույթի ձևավորումն է այս բոլոր մակարդակներում: Իսկ այսօր գիտելիքի համատեղ արտադրման մշակույթի ու կանոնների հարցում խնդիրներ ունենք (օրինակ՝ բանավիճելու, միմյանց հողվածները կարողալու, քննարկելու, կառուցողական քննադատության ձևաչափերի ձևավորվածության): Կաշկանդում են ավանդական արժեքները՝ գումարած ժառանգված խորհրդային երևույթները, որոնցից մենք դեռ ազատված չենք: Արդյունքում, օրինակ, խնդրահարույց է դառնում և ըստ էության չի գործում որևէ խնդրի շուրջ իրական բանավեճը, սեփական տեսակետի հստակ ձևակերպումը և փոխանակումը, գործընկերոջ հնչեցրած բանավոր կամ գրավոր տեսակետին անհամաձայնության արտահայտումը կամ ցանկացած այլ կառուցողական «մտավոր փոխանակում»: Հիմնական խնդիրների շարքում են կրթական հաստատությունների ծրագրային-կազմակերպչական արդիականացման հարցերը, բայց նաև՝ մշակութային, սովորույթային հարցեր: Այսպես, փոխադարձ ընկալումները ոչ թե մասնագիտական, այլ անձնավորված են, ընդգծված են սեռային, տարիքային, ստատուսային և այլ սահմանները: Նման իրավիճակում հասարակայնորեն նշանակալի գիտելիքի նորացման, թարմացման հնարավորությունները իրապես սահմանափակված են, իսկ սա կարծես հակասում է զարգանալու ցանկացած հավակնության:

СОНА МАНУСЯН – Креативность в контексте культурных особенностей и общественного развития. – В эпоху интенсивных информационных потоков, технологического развития и трансформационных общественных процессов исследование креативности вышло за рамки психологического измерения индивидуальных различий. Не случайно понятие инноваций, присущее техническим нау-

кам, усвоено также социальными науками, в том числе прикладной психологией. В развитых странах инновации стали неотделимой частью «социальной инженерии» – программ управления социальными структурами и процессами их улучшения. В статье анализируются концепции и модели креативной деятельности в различных сферах общественной жизни. Рассматриваются возможности, задачи, а также специфические культурные ограничения исследовательских и прикладных программ по развитию в армянском обществе креативного потенциала.

SONA MANUSYAN – *The Creativity in the Context of Cultural Specifics and Societal Development.* – In the era of unprecedented technological development, information streams and global and local social transformations, creativity research has long overcome the bounds of psychological measurement of individual differences. The concept of innovation has extended from technology to social sciences, including applied psychology to become an inbuilt part of social engineering questions. With that end in view, the article comparatively analyses the concepts and cultural models of creative activity in various domains of social life. In this context, perspectives, tasks and culture-specific limitations of research-and policy-oriented programs towards enhancement of creative potential of Armenian society are discussed.